Հավելված 14 Բրոքերային դիլերային կանոնների

Հաստատված է «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ

04/08/2024թ. Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից

Ուժի մեջ է 14/08/2024թ-ից

Հավելված 14:

«ITS ԲՈՐՍԱ» ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՎՈՂ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ՀԱՏՈՒԿ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ և ԴԻՐՔԵՐԻ ՓԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

«Ինվիա Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն») հիմնադրված է Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան, լիազորված է և վերահսկվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից, մատուցում է ներդրումային ծառայություններ լիցենզիայի հիման վրա:

Սույն ընթացակարգը Ընկերության Բրոքերային (դիլերային) գործունեության կանոնների (այսուհետ՝ Կանոններ) անբաժանելի մասն են և սահմանում են International Trading System Limited https://itsx.kz/ (այսուհետ՝ ITS Բորսա) առևտրային հարթակին/բորսային միացած Հաճախորդների կողմից հատուկ ռեպո գործարքների կատարման ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ):

Սույն Ընթացակարգի նկատամամբ կիրառելի է «ITS Բորսա»-ի գործարար գործող խմբագրությամբ կանոնները(«ITS Բորսա»-ի Կանոններ), այնքանով որքանով այն չի հակասում ՀՀ օրենսդրությանը:

Միանալով սույն Ընթացակարգին Հաճախորդը հավաստիացնում է, որ ծանոթացել է և Ընկերության պաշտոնական կայքէջում տեղադրված (https://inviabroker.com) սակագներին և պայմաններին, սույն Ընթացակագի վեբ հղումներով հասանելի պայմաններին (այսուհետ՝ «Պայմաններ»), հայտարարագրերին, տեղեկացումներին, զգուշացումներին ինչպես նաեւ ռիսկերի հայտարարագրին:

Ստորև նշված հասկացություններ

Հավելված 14 Բրոքերային դիլերային կանոնների

Հաստատված է «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ

04/08/2024թ. Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից

Ուժի մեջ է 14/08/2024թ-ից

Ստորև նշված հասկացությունները սույն Ընթացակարգ կիրառվում են ստորև նշված իմաստներով.

«Բրոքեր». Ինվիա Ինվեսթմենթս ՓԲԸ

«Հաճախորդ». անձ, որը Կանոններով սահմանված ընթացակարգով Ընկերության հետ բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել և գործում է «ITS Բորսա»-ի Առևտրային հարթակում:

«Հատուկ ՌԵՊՈ». «ITS Բորսա»-ի Առևտրային հարթակում կնքվող գործարք:

«Հանձնարարական» սույն Ընթացակարգի շրջանակներում Հաճախորդի կողմից Բրոքերին տրմադրվող հանձնարարություն, պատվեր սեփական արժեթղթերով և դրամական միջոցներով Հատուկ ՌԵՊՈ գործարքների կատարման վերաբերյայալ:

«ԱԹպլան». Հաշվառվող արժեթղթերի պլանային դիրքը որոշվում է յուրաքանչյուր թողարկողի, տեսակի, կատեգորիայի (տեսակի), թողարկման, տրանշի, սերիայի արժեթղթերի առումով՝ որպես Հաճախորդի պորտֆելում հաշվառվող արժեթղթերի քանակի գումար, ինչպես նաև այն արժեթղթերի, որոնք պետք է մուտքագրվեն Հաճախորդի պորտֆել, հանած այն արժեթղթերը, որոնք պետք է դուրս գրվեն Հաճախորդի պորտֆելից:Հաճախորդի պորտֆելի շրջանակներում ենթապորտֆելներ ձևավորելու դեպքում, ԱԹպլանը որոշվում է յուրաքանչյուր թողարկողի, տեսակի, կատեգորիայի (տեսակի), թողարկման, տրանշի, սերիայի արժեթղթերի առումով՝ որպես Հաճախորդի ենթապորտֆելում հաշվառվող արժեթղթերի քանակի գումար, ինչպես նաև այն արժեթղթերի, որոնք պետք է մուտքագրվեն Հաճախորդի ենթապորտֆել, հանած այն արժեթղթերը, որոնք պետք է դուրս գրվեն Հաճախորդի ենթապորտֆելից:

«ԴՄպլան». Հաշվառվող դրամական միջոցների պլանային դիրքը, որը որոշվում է յուրաքանչյուր արժույթի առումով, որպես Հաճախորդի պորտֆելում հաշվառվող դրամական միջոցներ, ինչպես նաև այն դրամական միջոցները, որոնք պետք է մուտքագրվեն Հաճախորդի պորտֆել, հանած այն դրամական միջոցները, որոնք պետք է դուրս գրվեն Հաճախորդի պորտֆելից, ներառյալ այն գումարը, որը պետք է դուրս գրվի Հաճախորդի պորտֆելից որպես Բրոքերի վարձատրություն, Հաճախորդի հաշվին փոխհատուցվող Բրոքերի ծախսերը և այլ վճարային պարտավորությունները, որոնք նախատեսված են Կանոններով: Հաճախորդի պորտֆելի շրջանակներում ենթապորտֆելների ձևավորման դեպքում, պլանային դիրքը որոշվում է որպես յուրաքանչյուր արժույթիառումով դրամական միջոցների դիրք, որը որոշվում է Հաճախորդի ենթապորտֆելում հաշվառվող դրամական

միջոցների, ինչպես նաև այն դրամական միջոցների միջոցով, որոնք պետք է մուտքագրվեն Հաճախորդի ենթապորտֆել, հանած այն գումարը, որը պետք է դուրս գրվի Հաճախորդի ենթապորտֆելից, ներառյալ այն գումարը, որը պետք է դուրս գրվի Հաճախորդի ենթապորտֆելից որպես Բրոքերի վարձատրություն, Հաճախորդի հաշվին փոխհատուցվող Բրոքերի ծախսերը և այլ վճարային պարտավորություններ, որոնք նախատեսված են Կանոններով:

Սույն Հավելվածում օգտագործվող այլ հասկացությունները, ունեն նույն իմաստը, որոնց բացահայտված են Կանոններում:

1. Սույնով Հաճախորդը հանձնարարում է «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ին յուրաքանչյուր անգամ, երբ Հաճախորդի պորտֆելի/ենթապորտֆելի մեջ գոյություն չունեն կամ բավարար չեն (հաշվի առնելով Հաճախորդի պորտֆելի սալդոն) երրորդ կողմերի իրավունքներից և ցանկացած այլ պարտավորություններից ազատ միջոցները (դրամական միջոցները/արժեթղթերը), որոնք անհրաժեշտ և բավարար են բոլոր պարտավորությունների կատարման համար, որոնք ենթակա են կատարման ոչ ուշ, քան հաջորդ առևտրային օրվա ավարտը, ինչպես նաև պարտավորությունները, որոնք առաջանում են այդպիսի գործարքների կատարման հետ կապված, մասնավորապես՝ եթե բոլոր պարտավորությունների կատարման արդյունքում, որոնք ենթակա են կատարման ոչ ուշ, քան հաջորդ առևտրային օրվա ավարտը, Հաճախորդի պորտֆելի սալդոն դրամական միջոցների կամ որոշակի տեսակի և թողարկողի արժեթղթերի հատվածում կլինի բացասական, Բրոքերի հետ, որն գործում է բրոքերի մեկ այլ հաճախորդի շահերի և հաշվին, կատարել մեկ կամ մի քանի Հատուկ ՌԵՊՈ գործարքներ ոչ ուշ, քան «ITS Բորսա» օտարերկրյա բաժնետոմսերի շուկայի սեկտորի հիմնական առևտրային սեսիայի ավարտը հաջորդ առևտրային օրվա ընթացքում, ներքոնշյալ պայմաններով և հետևյալ կարգով.

1.1. Հաճախորդի պորտֆելում / ենթապորտֆելում որոշակի տեսակի և թողարկողի արժեթղթերի բացակայության կամ պակասի դեպքում կատարել այդպիսի արժեթղթերով Հատուկ ՌԵՊՈ գործարք հետևյալ պայմաններով.

- արժեթղթերի քանակ՝ մեկ ստանդարտական լոտին բազմապատիկ մեծություն է, որը հավասար է կամ նվազագույն չափով գերազանցում է տվյալ

արժեթղթերի պակասի մեծությունը պարտավորությունները կատարելու համար;

- գործարքի տեսակ՝ Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասով գնում և Հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասով վաճառք;
- Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի գինը համապատասխանում է Հատուկ ՌԵՊՈ գործարքի կատարման պահին, որպես հասցեական ռեպո աճուրդային ռեժիմում ՌԵՊՈ պայմանագրի առաջին մասի գնին, Հատուկ ՌԵՊՈ գործարքի կատարման պահին գործող «ITS Բորսա»-ի գործարար կանոնների խմբագրության համապատասխան, կամ այն դեպքում, երբ «ITS Բորսա»-ի որոշմամբ սահմանվել է այլ գին, քան «ITS Բորսա»-ի Կանոններով նախատեսված հասցեական ռեպո աճուրդային ռեժիմում ՌԵՊՈ պայմանագրի առաջին մասի գինը համապատասխանում է «ITS Բորսա» որոշմամբ սահմանված հասցեական ռեպո աճուրդային ռեժիմով ՌԵՊՈ պայմանագրի առաջին մասի գնին;
- ՌԵՊՈ գումարը (Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի արժեքը) հաշվարկվում է ստորակետից հետո երկու նիշի ճշգրտությամբ՝ որպես Հատուկ ՌԵՊՈ գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի քանակի և Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասով մեկ արժեթղթի գնի արտադրյալ;
- Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի հաշվարկների ժամկետը՝ սույն Հավելվածի 1-ին կետում նշված պայմանի առաջացման օրվան հաջորդող առևտրային օրն է;
- հատուկ ռեպո գործարքի երկրորդ մասի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով, **P2**=<u>Sum2</u> որտեղ՝

  Q

  P2 - հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասի գինն է,

  Q - արժեթղթերի քանակը, որը հանդիսանում է Հատուկ ՌԵՊՈ գործարքի առարկա,

  Sum2 - Հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասի գումարը;

- Հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասի գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Sum2 = Sum * \left(1 + \frac{r}{100} * \left(\frac{T365}{365} + \frac{T366}{366}\right)\right),$$

Sum2– Հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասի գումարը, որը հաշվարկվում է երկու նիշի ճշտությամբ ստորակետից հետո,
Sum – Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի արժեքը (ռեպո գումարը),
r - ռեպո տոկոսադրույքը ՝ տարեկան տոկոսներով,
T365 - Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի կատարման ամսաթվի և Հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասի կատարման ամսաթվի միջև ընկած օրերի թիվը 365 օրից բաղկացած օրացուցային տարվա համար,
T366 - Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի կատարման ամսաթվի և Հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասի կատարման ամսաթվի միջև ընկած օրերի թիվը 366 օրից բաղկացած օրացուցային տարվա համար,

- Հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասի հաշվարկների ժամկետը՝ Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի հաշվարկների հաջորդ առևտրային օրն է,
- r (ՌԵՊՈ տոկոսադրույք, տարեկան տոկոսներով) = 16

1.2 Հաճախորդի պորտֆելում/ենթապորտֆելում դրամական միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում (այդ թվում՝ սույն Հավելվածի 1-ին կետում նշված Հատուկ ՌԵՊՈ գործարքների կատարումից հետո) կատարել մեկ կամ մի քանի Հատուկ ՌԵՊՈ գործարքներ Հաճախորդի պորտֆելում հաշվառվող կամ Հաճախորդի շահերով պայմանավորված նախկինում կնքված Գործարքների պահանջի իրավունքի առարկա հանդիսացող արժեթղթերով, որոնց պարտավորությունները պետք է կատարվեն ոչ ուշ, քան հաջորդ առևտրային օրվա ավարտը՝ Հաճախորդի պորտֆելում/ենթապորտֆելում դրամական միջոցների անբավարարության մեծությունից ոչ պակաս ընդհանուր գումարով՝ հետևյալ պայմաններով պարտավորությունների կատարման համար:

- թողարկողը և արժեթղթի տեսակը՝ համապատասխանում են Հաճախորդի պորտֆելում հաշվառված արժեթղթի տեսակին և թողարկողին կամ հանդիսանում է պահանջի առարկա՝ ի շահ Հաճախորդի ավելի վաղ կնքված այն Գործարքներով, որոնց գծով պարտավորությունները պետք է կատարվեն ոչ ուշ, քան հաջորդ առևտրային օրվա ավարտը,
- արժեթղթերի քանակ՝ մեկ ստանդարտ լոտի բազմապատիկ մեծություն, որը համապատասխանում է Հաճախորդի պորտֆելում/ենթապորտֆելում հաշվառված արժեթղթերի քանակին կամ հանդիսանում է պահանջի առարկա՝ ի շահ Հաճախորդի ավելի վաղ կնքված այն Գործարքներով, որոնց գծով պարտավորությունները պետք է կատարվեն ոչ ուշ, քան հաջորդ առևտրային

օրվա ավարտը, բայց ոչ ավելի, քան անհրաժեշտ է վճարման պարտավորությունների կատարման համար,

- գործարքի տեսակը՝ Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասով վաճառք և Հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասով գնում,
- Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի գինը համապատասխանում է Հատուկ ՌԵՊՈ գործարքի կատարման պահին, որպես հասցեական ռեպո աճուրդային ռեժիմում ՌԵՊՈ պայմանագրի առաջին մասի գնին, Հատուկ ՌԵՊՈ գործարքի կատարման պահին գործող «ITS Բորսա»-ի Կանոնների խմբագրության համապատասխան, կամ այն դեպքում, երբ «ITS Բորսա»-ի որոշմամբ սահմանվել է այլ գին, քան «ITS Բորսա»-ի Կանոններով նախատեսված հասցեական ռեպո աճուրդային ռեժիմում ՌԵՊՈ պայմանագրի առաջին մասի գինը համապատասխանում է «ITS Բորսա» որոշմամբ սահմանված հասցեական ռեպո աճուրդային ռեժիմով ՌԵՊՈ պայմանագրի առաջին մասի գնին;
- ՌԵՊՈ գումարը (Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի արժեքը) հաշվարկվում է ստորակետից հետո երկու նիշի ճշգրտությամբ՝ որպես Հատուկ ՌԵՊՈ գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի քանակի և Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասով մեկ արժեթղթի գնի արտադրյալ;
- Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի հաշվարկների ժամկետը՝ սույն Հավելվածի 1-ին կետում նշված պայմանի առաջացման օրվան հաջորդող առևտրային օրն է;
- հատուկ ռեպո գործարքի երկրորդ մասի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով, **P2**=$\underline{\text{Sum2}}$ որտեղ՝

Q

P2 - հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասի գինն է,
Q - արժեթղթերի քանակը, որը հանդիսանում է Հատուկ ՌԵՊՈ գործարքի առարկա,
Sum2 - Հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասի գումարը;

- Հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասի գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Sum2 = Sum * \left(1 + \frac{r}{100} * \left(\frac{T365}{365} + \frac{T366}{366}\right)\right),$$

Sum2– Հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասի գումարը, որը հաշվարկվում է երկու նիշի ճշտությամբ ստորակետից հետո,
Sum – Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի արժեքը (ռեպո գումարը),
r - ռեպո տոկոսադրույքը ՝ տարեկան տոկոսներով,
T365 - Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի կատարման ամսաթվի և Հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասի կատարման ամսաթվի միջև ընկած օրերի թիվը 365 օրից բաղկացած օրացուցային տարվա համար,
T366 - Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի կատարման ամսաթվի և Հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասի կատարման ամսաթվի միջև ընկած օրերի թիվը 366 օրից բաղկացած օրացուցային տարվա համար,

- Հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասի հաշվարկների ժամկետը՝ Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի հաշվարկների հաջորդ առևտրային օրն է,
- r (ՌԵՊՈ տոկոսադրույք, տարեկան տոկոսներով) = 10:

1.3 Սույն հանձնարարականի 1.1, 1.2 ենթակետերով սահմանված հանձնարարականի պայմանների (պարամետրերի)՝ (բացառությամբ Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի գնի, որը որոշվում է 1.1, 1.2 ենթակետերով սահմանված կանոններով) Հատուկ ՌԵՊՈ գործարքների կատարման պահին գործող «ITS Բորսա»-ի արժեթղթերի կազմակերպված աճուրդների անցկացման կանոնների խմբագրության համապատասխան ՌԵՊՈ գործարքների կնքման և կատարման պայմաններին (պարամետրերին) անհամապատասխանության դեպքում, սույնով հաճախորդը, սույն հանձնարարականի 1-ին կետով նախատեսված պայմանների ի հայտ գալու դեպքում, հանձնարարում է կատարել մեկ կամ մի քանի հատուկ ՌԵՊՈ գործարքներ՝ «ITS Բորսա»-ի քլիրիգային կանոններով նախատեսված պայմաններով (պարամետրերին համապատասխան), սույն հանձնարարականի 1.1, 1.2 ենթակետերով նախատեսված պայմաններով (պարամետրերին համապատասխան) Հատուկ ՌԵՊՈ գործարքներ կատարելու փոխարեն:

1.4 Այն դեպքում, երբ անձանց ցանկը, ովքեր իրավունք ունեն ստանալու դրամական միջոցներ, ինչպես նաև այլ գույք, այդ թվում՝ շահաբաժիններ և արժեթղթերից

տոկոսային եկամուտ (այսուհետ՝ Եկամուտ), փոխանցված Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի շրջանակներում կամ որոնց փոխարկվել են Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի շրջանակներում փոխանցված արժեթղթերը (այսուհետ՝ Արժեթղթեր), որոշվում է Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի շրջանակներում արժեթղթերը փոխանցելու պարտավորությունների կատարումից հետո մինչև Հատուկ ՌԵՊՈ գործարքի երկրորդ մասի շրջանակներում արժեթղթերը փոխանցելու պարտավորությունների կատարումն ընկած ժամանակահատվածում, Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի գնորդը պարտավոր է Հատուկ ՌԵՊՈ գործարքի առաջին մասի վաճառողին փոխանցել Եկամուտին համարժեք գումար՝ Արժեթղթերին համապատասխանող (հարկերը և տուրքերը նվազեցված՝ համաձայնկիրառելի օերնսդրության) (փոխանցել Արժեթղթերը, որոնք կազմում են Եկամուտը, Արժեթղթերին համապատասխանող քանակությամբ), արժեթղթերի թողարկողի կամ արժեթղթեր թողարկած անձի կողմից Եկամուտի վճարման պարտավորությունների կատարման (ամբողջական կամ մասնակի) փաստի մասին տեղեկատվության հրապարակումից հետո 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

2. Սույնով Հաճախորդը հանձնարարում է Ինվիա Ինվեսթմենթս ՓԲԸ-ին կանոնների գործողության դադարեցման օրվան նախորդող 2 (երկու) հաշվարկային օրվա ընթացքում, Հաճախորդի շահերից ելնելով և նրա հաշվին կնքել դիրքերի (առուվաճառքի գործարքների) փակման մեկ կամ մի քանի գործարքներ հետևյալ պայմաններով:
   - թողարկողը և արժեթղթի տեսակը՝ համապատասխանում են արժեթղթի տեսակին և թողարկողին, ԱԹպլանը, որի համար զրոյական չէ,
   - գործարքի տեսակը՝ վաճառք (եթե ԱԹ պլանը զրոյից մեծ է)/գնում (եթե ԱԹպլանը զրոյից փոքր է),
   - քանակը՝ հավասար է տվյալ արժեթղթի համար ԱԹ պլանի բացարձակ արժեքին (Եթե ԱԹ պլանը զրոյից փոքր է) կամ համապատասխանում է այն արժեթղթերի քանակին, որոնք անհրաժեշտ են ԴՄպլանի ոչ բացասական արժեքի հասցնելու համար (ԴՄպլանը զրոյից փոքր է),
   - մեկ արժեթղթի գինը՝ հանձնարարականի կատարման պահին ընթացիկ շուկայական գինն է,

3. Սույնով Հաճախորդը հանձնարարում է Ինվիա Ինվեսթմենթս ՓԲԸ-ին 0-ից ցածր ՆՊՐ2 ցուցանիշի նվազման դեպքում իրականացնել Հաճախորդի դիրքերի

փակման վերաբերյալ Ընկերության 100% ապահովվածության չդասակարգվող հաճախորդների դիրքերը փակելու կարգով նախատեսված գործողությունները:

Սույն Հանձնարարականը գործում է «ITS Բորսա» Առևտրային հարթակում օտարերկրյա թողարկողների արժեթղթերով առևտրային գործառնությունների իրականացման համար՝ Հաճախորդին բրոքերային ծառայությունների մատուցման ողջ ժամկետի ընթացքում: